ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ԲՈՒՐԱԲԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 13 սեպտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Ս. Քրմոյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2015 թվականի հոկտեմբերի 16-ին Բուրաբայում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների քրեակատարողական ծառայությունների ղեկավարների խորհրդի ձևավորման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 10 օգոստոսի 2016թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների քրեակատարողական ծառայությունների ղեկավարների խորհրդի ձևավորման մասին համաձայնագիրն (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2015 թվականի հոկտեմբերի 16-ին՝ Բուրաբայում: Համաձայնագրի նպատակն է ձևավորել Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների քրեակատարողական ծառայությունների ղեկավարների խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ), որն Անկախ պետությունների համագործակցության ճյուղային համագործակցության մարմին է և նախատեսված է քրեակատարողական ոլորտում քրեակատարողական ծառայությունների փոխգործակցության համակարգումն ապահովելու համար:

Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է Անկախ պետությունների համագործակցության գործադիր կոմիտեի, Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի, Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների պետական իշխանության մարմինների հետ փոխգործակցությամբ: Խորհուրդն իր

գործունեության համար հաշվետու է Անկախ պետությունների համագործակցության պետությունների ղեկավարների խորհրդին:

Համաձայնագրի անբաժանելի մաս է կազմում «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների քրեակատարողական ծառայությունների ղեկավարների խորհրդի մասին» կանոնակարգը, որի հիման վրա էլ Խորհուրդն իրականացնում է իր գործունեությունը: Կանոնակարգում սահմանված են Խորհրդի գործունեության հիմնական ուղղությունները և գործառույթները, Խորհրդի իրավունքները, Խորհրդի գործունեության կազմակերպման առանձնահատկությունները:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

– Համաձայնագրի մյուս կողմերի հետ համատեղ ձևավորել Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների քրեակատարողական ծառայությունների ղեկավարների խորհուրդ (հոդված 2),

– սահմանել Համաձայնագրի իրագործման համար պատասխանատու իրավասու մարմին և այդ մասին տեղեկացնել ավանդապահին Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին ծանուցման հետ միաժամանակ (հոդված 4),

– Համաձայնագրի իրագործման համար պատասխանատու իրավասու մարմնի փոփոխության դեպքում այդ մասին տեղեկացնել ավանդապահին (հոդված 4),

– որպես ընդունող պետություն հանդես գալու պարագայում՝ ապահովել, որպեսզի ՀՀ քրեակատարողական ծառայությունն իր միջոցների հաշվին կատարի Խորհրդի նիստի անցկացումը ֆինանսավորելու հետ կապված ծախսերը (Կանոնակարգ, Բաժին VI, կետ 22),

– ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության պետական իշխանության գործուղող մարմինները կամ կազմակերպությունները կատարեն

Խորհրդի անդամների և նիստի մասնակիցների գործուղման ծախսերը (Կանոնակարգ, Բաժին VI, կետ 23):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2015 թվականի հոկտեմբերի 16-ին Բուրաբայում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների քրեակատարողական ծառայությունների ղեկավարների խորհրդի ձևավորման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

13 սեպտեմբերի 2016 թվականի
ՍԴՈ –1298